ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԻ «ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

Մ. թ. ա. IX դարի վերջին քառորդին Ուրարտուն արդեն հզոր պետություն էր՝ պետական գրավոր խոսքով, իրեն բնորոշ մշակույթով, ներքին և արտաքին հետևողական քաղաքականությամբ։ Այս շրջանում [Իշպուինի (մ. թ. ա. մոտ. 825—810 թթ.) և Մինուա (մ. թ. ա. մոտ 810—786 թթ.) արքաների համատեղ դահակալության տարիներին] վերջնականապես կարգավորվում է նաև ուրարտական պետության կրոնը, սահմանագծվում են կրոնական քաղաքականության հիմնական սկզբունքները։ Ուրարտական դիցարանը կանոնավորված և գրեթե լրիվ տեսքով շարադրված է Մհերի դռան արձանագրության[1] մեջ, ուր պատմվում է կրոնական մի մեծ տոնի ու խալդեի պատվին դարպասներ կառուցելու մասին։ Այդ առթիվ հրամայվում է (կարգ է սահմանվում) զոհեր մատուցել երկրի բոլոր աստվածներին, ընդ որում նշվում է յուրաքանչյուր աստվածության անունը և նրան մատուցված զոհերի քանակը։ Արձանագրությունում աստվածությունները բաժանված են երեք արական և նույնքան էլ իգական խմբերի[2]։ Սակայն, բացի առանձին աստվածություններից, զոհեր են մատուցված նաև տարբեր «սրբությունների» (սրբատեղիների, ոգիների, որոշ դեպքերում էլ արդեն հիշատակված աստվածությունների պատվին, բայց այս անգամ վերջիններիս տալով այլ՝ պաշտամունքային կենտրոնները բնութագրող անուններ)։ Հիշյալ «սրբությունները» նույնպես ենթարկված են ընդհանուր սկզբունքին՝ կանոնավորված են և ընդգրկված առանձին խմբերում, որոնք միմյանցից առանձնանում են կա՛մ զոհաբերությունների քանակի տարբերությամբ, կա՛մ ընդհատվում «բաժանարար» որևէ աստծո առկայությամբ։

Առաջին խումբ. կազմված է մեկ հասկացությունից՝ «խալդյան զենքերին» ᴰḫaldinaue BE.LI^{MEŠ} *(4, 41)*[3] *և հիշատակված է 12 դիցանուններից հետո։ Խալդյան զենքերը՝* ᴰhaldinaue BE.LI^{MEŠ} *ձևով. ուրարտական արձանագրություններում հազվադեպ են հանդիպում. միայն այն դեպքում, երբ խոսվում է որևէ շինարարության ավարտի հետ կապված զոհաբերությունների*

---

[1] C. F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum Chaldicarum. I—II, Berlin und Leipzig, 1926—1935 (CIChl), Taf. VII—X, Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, № 27, F. W. König, Handbuch der chaldischen Inschriften (HChI), Graz, 1955—1957, № 7.

[2] *Այս մասին ավելի հանգամանալից տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 158—164։*

[3] *Այստեղ և այլուր «սրբություններից» հետո հիշատակված թվերը Մհերի դռան արձանագրության այն տողերն են, ուր գրված է տվյալ «սրբության» անունը։ Հոդվածում մեջբերված ուրարտերեն տեքստերի հայերեն թարգմանությունները, ինչպես և լատիներեն տառադարձությունները, խմբագրված են Հ. Հ. Կարագյոզյանի կողմից, որին և հայտնում ենք մեր շնորհակալությունը։*

մասին[4]։ Հավանաբար այս հասկացության գրության մեկ այլ ձևն է ^{D}ḫaldine ^{GIŠ}šure «Խալդյան զենքը (=սուրը)»[5] արտահայտությունը, որ հանդիպում է կա՛մ ռազմական բնույթի արձանագրություններում[6], կա՛մ էլ հետևյալ կապակցությունում՝ ^{D}ḫaldine kurune ^{D}ḫaldine ^{GIŠ}šure kurune՝ «Խալդեն հզոր (է), խալդյան զենքը հզոր (է)»։

Թերևս Խալդեի «զենքերի» մասին ուրարտացիք ունեցել են երկակի պատկերացում՝ որպես կառուցող ու ստեղծագործող ուժ՝ ^{D}ḫaldine BE.LI^{MEŠ} ձևով և ուղղակի իմաստով՝ ^{D}ḫaldine^{GIŠ}šure, ինչպես ասուրական, հնդկական կամ հրեական կրոններում, ուր Ասուրի, Նիվայի, Վարունայի, Ինդրայի և կամ Եհովայի զենք ասելով՝ հասկացվում էր թշնամուն ոչնչացնելու միջոց (գերբնական հատկություններով օժտված նետ ու աղեղ, նիզակ, սուր կամ որևէ այլ ուժ)։ Այս առումով հետաքրքիր է, որ Խալդեին ձոնվել են ոսկուց, արծաթից, երկաթից ու բրոնզից պատրաստված զենքեր՝ վահաններ, ռազմակառքեր, աղեղներ, կապարճներ, սրեր, նիզակներ[8]։ Մուծածիրի Խալդեի տաճարում պահվող այդ զենքերի հետ միասին Սարգոն II-ը (մ. թ. ա. 721—705 թթ.) հիշատակում է նաև մի «մեծ ոսկյա սուր, նրա (Խալդեի) զենքը»[9], որը հիշեցնում է Աստվածաշնչի՝ կենաց ծառը պահպանելու կոչված «բոցեղեն սուրը»[10]։

Երկրորդ խումբ. առաջինից բաժանված է 19 դիցանունների հիշատակությամբ և կազմված է երեք հասկացություններից. ^{D}ḫaldine inereaše (12, 52) «խալդյան inereaše-ին», ^{D}ḫaldine alsuiše (13, 53) «խալդյան մեծությանը», ^{D}haldine diruše (13, 53) «խալդյան diruše-ին», որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված են 1 ցուլ և 2 ոչխար։

Inereaše բառը հայտնի է նաև Արգիշթե I-ի (մ. թ. ա. 786—764 թթ.) տարեգրությունից[11]։ Մ. Մերեթելին, Ի. Մ. Դյակոնովը inereaše բառը թարգմանում են «աստվածայնություն», «աստվածություն»[12], իսկ Գ. Ա. Ղափանցյանը՝ «առնականություն», «քաջություն»[13] իմաստներով։ Գ. Ա. Մելիքիշվիլին առաջարկում է «պատկեր», «դեմք»[14] տարբերակը։

---

4 Տե՛ս օրինակ, УКН, № 25. Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-блура, Ереван, 1966, № 1 և այլուր։

5 Գ. Ա. Ղափանցյանի թարգմանությամբ՝ «նետը», տե՛ս Г. А. Капанцян. Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, стр. 266—267:

6 Տե՛ս УКН, № 21—24 և այլուր։

7 Տե՛ս օրինակ, УКН, № 39, տող 4—5, № 127, I, տող 12 և այլուր։

8 И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, №№ 2, 3, 4 (АВИИУ), 49 (367).

9 Նույն տեղում։

10 Գիրք Ծննդոց, գլ. Գ, 24։

11 УКН, № 128, А 4, տող 1—4։

12 Տե՛ս УКН, стр. 148, прим. 14; И. И. Мещанинов, Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., 1978, стр. 144; И. М. Дьяконов, Урартские письма и документы (УПД), М.—Л., 1963, стр. 66, прим. 74.

13 Г. А. Капанцян, Общие элементы между урартским и хеттским языками, Эривань, 1936, стр. 50—52.

14 Г. А. Меликишвили, К чтению одного места в летописи урартского царя Аргишти I. «Переднеазиатский сборник», вып. 3, М., 1979, стр. 171—177.

Ուրարտուում «խալդյան մեծությամբ» արտահայտությունը Խալդեին դիմելու ամենատարածված ձևերից մեկն էր։ Արձանագրություններում այն հանդիպում է ավելի քան հարյուր անգամ։ Ուրարտական արքաները իրենց ու իրենց երկրի հզորությունը անխզելիորեն կապում էին «խալդյան մեծության» հետ՝ «խալդյան մեծությամբ Մինուան արքա է հզոր, արքա մեծ, տիրակալը Տուշպա քաղաքի»[15]։ «Խալդյան մեծությամբ» են Ուրարտուի արքաները հիմնում տաճարներ, քաղաքներ ու արձանագրություններ, կառուցում ջրանցքներ, կռվում ու հաղթում։

^{D}ḫaldine diruše հասկացությունը Ի. Մ. Դյակոնովը բացատրում է «Խալդիի ողորմածությունը» ձևով[16], իսկ Մորգմանը diruše-ն ստուգաբանել է «դրոշ» բառով[17]։ Վերջինիս դիտողությունը չի ընդունվում գրեթե բոլոր ուրարտագետների կողմից։ Բայց եթե նկատի ունենանք, որ այժմ հայտնի են բազմաթիվ ուրարտական դրոշների պատկերներ, նաև այն, որ Սարգոն II-ի արձանագրությունում ուղղակի հիշատակվում է Խալդեի տաճարում պահվող դրոշի (շտանդարտ) մասին[18], ապա պիտի ընդունել, որ Ուրարտուում եղել է «խալդյան դրոշը» հասկացությունը, որն անպայման, ինչպես բխում է Մհերի դռան արձանագրության բնույթից, պիտի հիշատակված լիներ այնտեղ, ստանալով զոհերի համապատասխան քանակ. հետևաբար կարելի է ^{D}ḫaldine diruše արտահայտությունը թարգմանել «խալդյան դրոշին» ձևով։

Երրորդ խումբ. երկրորդից սահմանազատված է զոհաբերությունների քանակի փոփոխմամբ, կազմված է երեք հասկացություններից ^{D}ḫaldinaue LÚ A. SI^{MEŠ} (13, 53) «Խալդիի զորքերին», ^{D}IŠKUR LÚ A.SI^{MEŠ} (13, 14) «Թեյշեբայի զորքերին», ^{D}Artu arasaue (14, 54) «Արտուարասեներին»։ Առաջին երկու հասկացություններին զոհաբերված է 2 ցուլ և 4 ոչխար, իսկ վերջինին՝ 2 ցուլ և 34 ոչխար։

Այս արտահայտությունները ուրարտական այլ աղբյուրներից հայտնի չեն։ Ասորեստանցիները, ասելով «Աշուրի զորքեր»[19], «Էնլիլի և Մարդուկի զորքեր»[20], «Շամաշի և Մարդուկի զորքեր»[21], հաճախ նկատի ունեին որոշակի զինվորական միավորումներ։ Հետևաբար կարելի է ենթադրել, որ Ուրարտուում էլ են եղել Խալդեին և Թեյշեբային ձոնված նման զորամասեր։ Դրա վկայությունն է, թերևս, Կարմիր բլուրում գտնված դրոշը՝ Թեյշեբայի կերպարանքով[22]։ Աստվածաշնչում Եհովայի զորքեր ասելով՝ նկատի է առնվում «Իսրայելի որդիներին»[23], այսինքն բոլոր նրանց, ովքեր պաշտում էին Եհովային։ Նման պատկերացում, թերևս, եղել է նաև Ուրարտուում և Խալդեի, Թեյշեբայի

---

15 УКН, № 29, տող 13—15 և այլուր։
16 УПД, стр. 69, прим. 90.
17 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, I, Երևան, 1971, էջ 697։
18 Տե՛ս АВИИУ, 49 (367):
19 АВИИУ, 49 (125):
20 АВИИУ, 49 (91):
21 АВИИУ, 46 (6):
22 Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962, стр. 82.
23 Գիրք ելից, գլ. է, 4։

կամ մի այլ աստվածության զորքեր ասելով՝ հասկացել են ցեղեր կամ ժողովուրդներ, որոնց պաշտամունքը առնչվել է տվյալ աստվածության հետ։

Անդրադառնալով ^{D}arṭu'arasaue դիցախմբին, պետք է նշել, որ այս նույն միտքը կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ ^{D}UTU ^{LÚ}A. SI^{MEŠ}։ Այսինքն «Արտուարասեները» համապատասխանում են «Շիվինեի (արևի) զորքեր» [=Ասորեստանի «Շամաշի (արևի) զորքերը»] հասկացությանը։ Այս ենթադրությունը բխում է այն հանգամանքից, որ «Արտուարասեները» հիշատակված են «սրբություններին» խմբում, ուր վկայված են Ուրարտուի գլխավոր աստվածությունների «զորքերը»։ Այստեղ ևս պահպանված է Ուրարտուում կանոն դարձած այն հաջորդականությունը, ըստ որի՝ սկզբում հիշատակվում է Խալդեի, այնուհետև Թեյշեբայի և ապա Շիվինեի անունը։ Ինչպես կտեսնենք ստորև, առանձին խմբերում են ընդգրկված նաև այս երեք աստվածությունների նման այլ հատկանիշներ ևս, պահպանելով հիշյալ հաջորդականությունը։

Չորրորդ խումբ. առաջինից սահմանազատվում է զոհաբերությունների տարբերությամբ, ընդգրկում է վեց հասկացություն, որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված է 1 ցուլ և 2 ոչխար։ Այս խումբը թերևս կազմված է երկու ենթախմբից՝

ա) ^{URU}ardiniaue DINGIR (*14, 55*) «արդինեցիների աստծուն», ^{URU}qumenunaue DINGIR (*14, 55*) «կումենուցիների աստծուն», ^{URU}tušpaninaue DINGIR (*14, 56*) «տուշպացիների աստծուն»։

բ) DINGIR^{MEŠ} ^{D}ḫaldinine URU-ne (*15, 56*) «խալդյան քաղաքի աստվածներին», DINGIR^{MEŠ} ^{URU}arsuniuinine (*15, 57*) «արծունիուինյան քաղաքի աստվածներին», ^{D}ḫaldine daše (*15, 57*) «խալդյան daše-ին»։

Ըստ Գ. Ա. Մելիքիշվիլու, առաջին ենթախմբում հիշատակված են Խալդե, Թեյշեբա և Շիվինե աստվածությունները, սակայն այլ, նրանց պաշտամունքային կենտրոնները բնորոշող անուններով. այսպես՝ Խալդեի գլխավոր պաշտամունքային կենտրոնն էր Արդինե (Մուծաթիր) քաղաքը, Թեյշեբայինը՝ Կումենուն, Շիվինեինը՝ Տուշպան[24]։

Երկրորդ ենթախումբը ամբողջությամբ առնչվում է Խալդեի պաշտամունքի հետ։ «Խալդյան քաղաքի աստվածներ» ասելով, թերևս, նկատի են առնված նույն Արդինե քաղաքում պաշտվող այլ աստվածներ։ Այս հասկացությունը հավանաբար համարժեք պետք է համարել Կելյաշինի արձանագրության անեծքի բանաձևից հայտնի՝ DINGIR^{MEŠ}-se ^{URU}ardineše[25] «Արդինե քաղաքի աստվածներ» արտահայտությանը։ Հայտնի է, որ Արդինեում, Խալդեի տաճարում կար նաև նրա կնոջ՝ Արուբանեի, գերբնական պահապանների և Ուրարտուի աստվածացված արքաների պաշտամունքը։ «Արծունիուինեյան քաղաքի աստվածներ» արտահայտությունը հայտնի է միայն այս արձանագրությունից, իսկ Արծրունիուինե քաղաքը՝ նաև Սղդայում և Բերկրիում գտնված Մինուայի արձանագրություններից[26]։ Երկու դեպքում էլ խոսքը այստեղ Խալդեի պատվին պաշտամունքային կառույցներ (դարպասներ և արձանասյուն)

---

24 Տե՛ս Г. А. Меликишвили, Наири—Урарту, Тбилиси, 1954, стр. 365—368.
25 CICh, *տախտակ III*; УКН, № 19, *ուր. տ.*, *տող. 40—41*։ HChI, № 9, § 27:
26 УКН, №№ 97, 99.

կանդնեցնելու մասին է։ Ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այն հանգամանքը, որ երկրորդ ենթախմբի մյուս երկու «սրբությունները» առնչվում են Խալդեի պաշտամունքի հետ, հնարավորություն է տալիս ենթադրելու, որ «Արծունիուինեյան քաղաքի աստվածներ» հասկացությունը առնչվում է Խալդեի պաշտամունքի հետ։

Գ. Ա. Ղափանցյանը Արծունիուինե քաղաքը համարում է Ուրարտուի «հարազատ» քաղաքներից մեկը[27]։ Ն. Գ. Ադոնցի կարծիքով այն գտնվել է Բերկրիից ոչ հեռու[28]։

«Խալդեի dase-ին» արտահայտությունը հայտնի է միայն այս արձանագրությունից և նրա իմաստը պարզ չէ։ Սակայն տեղը, ուր հիշատակված է, խոսում է այն մասին, որ այստեղ վկայված է ոչ թե Խալդեի հատկություններից կամ նրան դիմելու ձևերից մեկը, այլ Խալդեի պաշտամունքի հետ կապված մի երևույթ (ինչպես օրինակ՝ «թիկնապահ», «ուղեկից» կամ նման մեկ այլ հասկացություն)։

Հինգերորդ խումբ. չորրորդից սահմանազատված է Շուբա աստվածության հիշատակությամբ և կազմված է Խալդե, Թեյշեբա և Շիվինե աստվածությունների երկրորդական կարևորություն ունեցող պաշտամունքային կենտրոնները բնորոշող հասկացություններից, որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված է 1 ցուլ և 2 ոչխար. ^{D}ḫaldiniuaue KA (16, 58) «Խալդյան դարպասներին» (ընդհանրապես), ^{D}IŠKUR KÁ ^{URU}eridiane (16, 59) «Էրիդիա քաղաքի Թեյշեբա (աստծո) դարպասներին», ^{D}UTU KÁ ^{URU}uišinine (16, 59) «Ուիշինե քաղաքի Շիվինե (աստծո) դարպասներին»։

Վեցերորդ խումբ. կազմված է երեք հասկացություններից՝ ^{D}ḫaldine arne (17, 60) «Խալդյան ողորմածությանը», ^{D}ḫaldine ušmaše (17, 61) «Խալդյան զորությանը», DINGIR^{MES} ^{D}ḫaldine susine (17, 61) «Խալդեի սուսեի (տաճարի) աստվածներին», որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված է 1 ցուլ և 2 ոչխար և նախորդ՝ հինգերորդ խմբից սահմանազատված է էլիա դիցանվան հիշատակությամբ։

«Խալդյան ողորմածություն» կապակցությունը հիշատակված է միայն Մհերի դռան արձանագրությունում։

«Խալդյան զորությամբ» արտահայտությունը ևս Խալդեին դիմելու ամենատարածված ձևերից մեկն էր։ «Խալդյան զորությամբ» էին Ուրարտուի տիրակալները շենացնում երկիրը, արշավում թշնամու վրա և հզոր էին նրանք «Խալդյան զորությամբ»։

«Խալդեի սուսեի աստվածներին» դարձվածքը կարելի է մեկնաբանել որպես ակնարկ այն աստվածությունների մասին, որոնց պաշտամունքը առընչվում էր Խալդեի հետ և իրագործվում Խալդեի տաճարներում, որի վկայությունն է, թերևս, Ուրարտուի աստվածացված արքաների պաշտամունքի առկայությունը Մուծածիրի Խալդեի տաճարում[29]։

Յոթերորդ խումբ. նախորդից սահմանազատված է Թալապուրա և Կիլիբանե դիցանունների հիշատակությամբ։ Կազմված է երեք հասկացություններ-

27 Գ. Ա. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 48։
28 Ն. Գ. Ա դ ո ն ց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 227։
29 «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 164։

րից, որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված է 1 ցուլ 2 ոչխար՝ KUR*ebani-*naue DINGIR *(18, 63) «երկրացիների (=լեռնցիների՞) աստծուն»,* KUR*alganinaue* DINGIR *(18, 63) «հարթավայրալիննների (=դաշտեցիների) աստծուն»,* ENGUR*suininaue* DINGIR[30] *(19, 64) «ծովալիննների աստծուն»:*

Ութերորդ խումբ. *սահմանազատված է յոթերորդից զոհաբերությունների քանակի տարբերությամբ և կազմված է երեք հասկացություններից, որոնցից երկուսին զոհաբերված է 4 ցուլ և 14 ոչխար՝* DINGIR*MEŠ* atqananaue *(19, 64) «զոհաբերությունների աստվածներին»,* ...raue *(19, 65): Այս անվան միայն վերջին մասն է պահպանված (*aue *տրական հոլովի հոգնակի թվի վերջավորությունն է): Թերևս այս խմբում է ընդգրկված նաև* DINGIR*MEŠ* UKKIN*MEŠ (19, 65) «բոլոր աստվածներին» հասկացությունը, որին զոհաբերված է 4 ցուլ, 18 ոչխար:*

Իններորդ խումբ. *սահմանազատված է նախորդից զոհաբերությունների քանակի տարբերությամբ* D*ḫaldine niribe (20, 66) «Խալդեի հոտին»,* D*uainaue* KA URU*nišì*[...]*ne (20, 66—67) «Նիշե... քաղաքի Ուայան (աստծո) դարպասներին»,* GEN*babanaue (20, 67) «լեռներին», որոնց զոհաբերված են միայն ոչխարներ:*

Այսպիսով, ուրարտական դիցարանը, համաձայն Մհերի դռան արձանագրության տվյալների, կազմված է երեք արական, երեք իգական աստվածությունների և ինը «սրբությունների» խմբերից: Վերջիններս կազմված են միմյանց հետ պաշտամունքային ընդհանրություններ ունեցող հասկացություններից. առաջին, երկրորդ, վեցերորդ խմբերում և չորրորդի երկրորդ ենթախմբում ամփոփված են Խալդեի պաշտամունքի հետ առնչվող երևույթներ: Իսկ երրորդ, հինգերորդ խմբերում և չորրորդի առաջին ենթախմբում՝ «սրբություններ», որոնք առնչվում են Ուրարտուի գլխավոր երեք աստվածությունների պաշտամունքի հետ: Տրամաբանական կապ ունեն նաև յոթերորդ և ութերորդ խմբերում ամփոփված «սրբությունները»:

«СВЯТЫНИ» УРАРТСКОГО ПАНТЕОНА

С. Г. АМАЯКЯН

(Резюме)

Божества и «святыни» урартского пантеона известны в основном из надписи «Мгери дур», где они распределены по пятнадцати группам. Три из этих групп отведены богам, три богиням и девять «святыням» Урарту. Каждая группа составлена из понятийно близких членов. Это обстоятельство делает возможным объяснение некоторых неясных слов; например, для D*arṭu'arasaue* можно предложить перевод «воинству бога Шивини».

---

30 *Մ. Ա. Իսրայելյան, Ուրարտագիտական դիտողություններ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. գիտ.), 1970, № 3, էջ 83:*